2017, ԴԵԿՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 23 (499)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

4 դեկտեմբերի **Ռումինիայում ՀՀ նորանշանակ դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Սերգեյ Մինասյանին:

Հանդիպմանը Նորին Սրբությունը շնորհավորեց դեսպանին նշանակման առիթով՝ մաղթելով արդյունավետ գործունեություն՝ ի նպաստ Հայաստանի եւ Ռումինիայի միջեւ բարեկամական հարաբերությունների ու գործակցության առավել ամրապնդման:

Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց դեռեւս վաղ միջնադարից ձեւավորված հայ-ռումինական սերտ կապերին, ինչպես նաեւ հայ համայնքի պատմական կարեւոր դերակատարությանը Ռումինիայի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում՝ նշելով, որ շնորհիվ գովարժան իր վաստակի ռումինահայությունն այսօր վայելում է երկրի իշխանությունների հարգանքը:

Զրույցի ընթացքում պրն Մինասյանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ օրհնության եւ բարեմաղթանքների համար՝ հավաստիացնելով, որ իբրեւ դեսպան՝ պիտի իր ջանքերը ներդնի հայ-ռումինական հարաբերությունների ամրապնդման համար: Նորանշանակ դեսպանն իր առաքելության մեջ կարեւորեց գործակցությունը Ռումինիայի հայոց թեմի եւ ազգային հաստատությունների հետ:

Խոսվեց նաեւ Հայաստանյայց Առաքելական եւ Ռումին Ուղղափառ Եկեղեցիների ջերմ հարաբերությունների մասին: Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

11 դեկտեմբերի **Վրաստանի եւ Հարավային Կովկասի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու եպիսկոպոսին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի եւ Հարավային Կովկասի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու եպիսկոպոս Մարկուս Շոխին:

Նորին Սրբությունը ողջունեց եպիսկոպոս Շոխին՝ արդյունավետ գործունեություն մաղթելով նրան նոր հանգամանքում: Վեհափառ Հայրապետն անդրադարձ կատարեց Հայաստանյայց Առաքելական եւ Ավետարանական Եկեղեցիների միջեւ առկա կապերին եւ գործակցությանը՝ Էկումենիկ կազմակերպությունների հարթակներում եւ տարբեր սոցիալական ու կրթական ծրագրերի շրջանակներում, գոհունակություն հայտնեց Վիրահայոց թեմի եւ Ավետարանական-Լյութերական Եկեղեցու միջեւ ձեւավորված համագործակցության առիթով:

Զրույցի ընթացքում եպիսկոպոս Մարկուս Շոխը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, նշեց, որ առաջին անգամ է այցելում Հայաստան, սակայն Երուսաղեմում իր ուսումնառության տարիներին առիթ է ունեցել ծանոթանալու Հայ Եկեղեցու սրբազան ժառանգությանը եւ հայ ժողովրդի պատմությանը: Ավետարանական-Լյութերական Եկեղեցու առաջնորդը հայոց Հովվապետին տեղեկություններ փոխանցեց տարածաշրջանում իր առաքելության վերաբերյալ:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը:

Առաջին լուսավորիչների տոնը

Դեկտեմբերի 2-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց Հայոց աշխարհի առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Հայոց Եկեղեցու հիմնադիր առաքյալների տոնը մեծ շուքով նշվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Դեռեւս 2015 թվականին տոնը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով հռչակվել է աստվածամուխ Սբ Գեղարդի ուխտի օր:

Շնորհառատ օրվա կապակցությամբ Միածնաէջ Մայր տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Ասողիկ քհն. Կարապետյանը:

Ս. Պատարագին ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ, հայաստանյան տարբեր թեմերից ժամանած հոգեւոր սպասավորներ եւ ուխտավորներ:

Սրբազան արարողության ընթացքում հայրապետական հանդիսավոր թափորով Հին Վեհարանից Մայր տաճար բերվեց հրաշագործ ս. Գեղարդը, որպեսզի համայն հայության հոգեւոր կենտրոնում ուխտավորաբար մեկտեղված հավատավոր ժողովրդին հնարավորություն ընձեռվի երկրպագել, հպվել եւ համբուրել Մայր Աթոռում պահվող համաքրիստոնեական մեծագույն սրբություններից մեկը՝ ս. Գեղարդը:

Տոնի կարեւորությանն անդրադարձավ պատարագիչ տեր Ասողիկը՝ իր քարոզում ի մասնավորի ընդգծելով. *«Սիրելի՛ հավատացյալներ, այսօր մեր Եկեղեցու համար մեծագույն տոն է: Չեմ վարանի ասել, որ մեր Եկեղեցու համար այսօր ծնունդ է եւ հարություն: Այս երկու տոները քրիստոնեական Եկեղեցու համար մեծագույնն են, հիմքերն են քրիստոնեական հավատքի: Մեր Եկեղեցու համար էլ մեր առաքյալների տոնը հիմքն է մեր հավատքի, մեր հոգեւոր կյանքի, մեր քրիստոնեական ընթացքի եւ հավիտենական կյանքի:*

...Մեր Եկեղեցին իր հիմնադիրներին անվանակոչել է առաջին լուսավորիչներ, տվել է «լուսավորիչ» անվանումը... Մեր Եկեղեցին իր հիմնադրման իսկ պահից փափագողն է եղել լույսի եւ այդ լույսն է սփռել իր կայնքում եւ իր շրջապատում: Լույս՝ ազգային հարաբերություններում, լույս՝ եկեղեցական հարաբերություններում: Եվ այդպես պիտի Եկեղեցին եւ ժողովուրդը իրեն Ավետարանը բերած առաքյալներին կոչեին՝ լուսավորիչներ, որոնք եկան լուսավորելու մեր հոգիները, մեր միտքն ու սիրտը, ազնվացնելու մեր անձը եւ կարողությունները, որ ունենք, եւ այն էլ ավելի առատացնելու եւ ի փառս Աստծո զարգացնելու, աճեցնելու եւ բազմացնելու:

Լուսավորիչներն են մեր առաքյալները, լուսավորիչներն են նրանց հաջորդները՝ ս. Գրիգորը, ս. Տրդատը, լուսավորիչներն են՝ ս. Մեսրոպը, ս. Սահակը եւ նրանց հաջորդող մեր Եկեղեցու պանծալի դեմքերը:

Այս լույսով է, որ դարեր շարունակ մեր Եկեղեցին սնուցանել է իր հարազատ ժողովրդին, եւ այդ լույսով է, որ մեր հարազատ ժողովուրդն արարել ու ստեղծագործել է իր կյանքն ու երկիրը՝ հակառակ այն բազմաթիվ փորձությունների ու հարձակումների, այն բազում կորուստների, որոնք պատմությունը բաժին հանեց մեզ՝ հայերիս, ի սկզբանե լուսավորյալ ժողովրդիս:

...Սուրբ Թադեոս առաքյալի վկայությունից հանված Տիրոջ խոստումը իր առաքյալների քարոզչությամբ եւ նահատակությամբ, իր արքայության ընդունմամբ հինավուրց հայ ազգին՝ իր հավատացյալներին, դարձնում է իր սեփական ժողովուրդը եւ իր աստվածային հույսով պարուրում ու պահպանում մինչեւ աշխարհի վախճանը: Այս խոստումը մեզ համար պիտի դառնա զորության անսպառ աղբյուր՝ մեր լուսավորյալ կյանքը անխավար պահելու, անխախտ պահելու եւ ողջ մարդկության համար դարձնելու աստվածային սիրո աղբյուր եւ աստվածահաճո կյանքի ներշնչարան»:

Շարունակությունը՝ էջ 2

<< ՁՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ

Դեկտեմբերի 8-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մասնակցությամբ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի, տեղի ունեցավ ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդության հիմնադրման 20-ամյակին նվիրված տոնական հանդիսություն:

Մինչ միջոցառման սկիզբը հանդիսության մասնակիցները թատրոնի ճեմասրահում դիտեցին «Եկեղեցի-բանակ» թեմայով ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էին շնորհալի զինվորականների ձեռքի աշխատանքները:

Տոնական հանդիսությունն սկսվեց ՀՀ օրհներգով, որից հետո Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախմբի կատարմամբ հնչեց Տերունական աղոթքը: Այնուհետեւ ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը հանդես եկավ ողջույնի խոսքով:

Շնորհավորելով ներկաներին՝ Հոգեւոր առաջնորդության գործունեության 20-ամյակի առիթով, սրբազան հայրը մասնավորաբար ասաց. *«...Այսօր, փառք Աստծո, ունենք պետականություն, հաղթանակած բանակ եւ որ ամենակարեւորն է՝ հավատքի ու գաղափարի հերոս զինվոր, ինչը հաստատվեց անցյալ տարի՝ ապրիլին: Այսօր հպարտորեն կարող ենք ասել, որ հերոսությունը հայ զինվորի արյան ու գիտակցության մեջ է, զինվոր, ով զենքը ձեռքին, քաջությունը սրտում, աղոթքը շուրթերին՝ իր բարոյական իրավունքն է պաշտպանում: Հետեւաբար, վստահորեն կարող ենք փաստել, որ հայրենիքի ծառայությանն ու պաշտպանությանը զինվորագրվելը հայ մարդու համար պարտադրյալ մի ծառայություն չէ, այլ պատվաբեր ու նվիրական առաքելություն: Ահա այդ առաքելության մեջ մեր զավակների հաստատուն մնալուն է ուղղված ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության քսանամյա գործունեությունը, որը նպատակ ունի հայ զինվորին ու սպային տեսնել աննկուն, հոգեպես հաստատակամ ու կայուն, իսկ մեր հայրենիքը՝ պաշտպանված ու զորեղ: 20 տարին թե՛ կարճ եւ թե՛ երկար ժամանակ է արդեն արվածին գնահատական տալու համար, բայց նաեւ մի հանգրվան, մի հնարավորություն՝ հետ նայելու, անցած ճանապարհից դասեր քաղելու, երիտասարդական ավյունով առաջ նետվելու՝ ի խնդիր նոր մարտահրավերների, քանի որ վստահ ենք, որ նվիրական տեսլականն ու ոգին են առաջնորդելու յուրաքանչյուրիս, եւ բոլորս անվերապահորեն ներդնելու ենք մեր բազկի, մտքի ու հոգու լավագույն արգասիքները՝ ի փառս Աստծո եւ ի զորացումն հայրենիի մեր պետականության ու հաղթանակած բանակի»*:

Վրթանես սրբազանն իր խոսքում նշեց նաեւ, որ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության գործունեության նպատակներից է հայ զինվորին ու սպային աննկուն տեսնելը, հոգեպես հաստատակամ ու կայուն, իսկ հայրենիքը՝ պաշտպանված ու զորեղ, եւ տեղեկացրեց, որ անցած 20 տարիների ընթացքում ավելի քան 300 գնդերեցներ իրենց ծառայությունն են բերել Հոգեւոր առաջնորդությունում, զորամասերում կառուցվել են 3 տասնյակից ավելի մատուռներ եւ աղոթատներ, ամփոփ ներկայացրեց իրականացված աշխատանքները: Նա հիշեց երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին եւ լուսահոգի սպարապետ Վազգեն Սարգսյանին, որոնց նախաձեռնությամբ 1997 թ. սկիզբ դրվեց Զինված ուժերում հոգեւոր ծառայությանը: Սրբազան հայրը իր խորին երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Հայոց բանակի եւ Հոգեւոր առաջնորդության նկատմամբ դրսեւորվող մշատական հայրական խնամքի համար:

Այնուհետեւ հանդիսության մասնակիցներին իր պատգամն ու օրհնությունը բերեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Փառք եւ գոհություն ենք մատուցում Աստծուն, որ անսասան եւ հաղթական է Հայոց բանակը, որն այսօր հուսալի գրավականն է մեր ժողովրդի ապահով, խաղաղ ու ստեղծագործ կյանքի:

Մեր բանակը ձեւավորվեց անկախ պետականության հաստատման եւ Արցախի ազատագրության հերոսական օրերում եւ կայացավ ու զորացավ մեր պետականության ամրապնդման հետ: Մեր ժողովուրդն ամեն դժվարություն հանձն առավ հայրենի հողը պաշտպանելու եւ իր ազատ կյանքը կառուցելու համար: Հայրենիքի պաշտպանության նվիրական պայքարում, նաեւ մարտի դաշտում, Առաքելական մեր Ս. Եկեղեցին իր զավակների կողքին էր՝ զորացնելով նրանց Աստծո խոսքով ու հավատքով, որն իբրեւ հոգեւոր սուսեր՝ բարձրանում է ընդդեմ բռնության, կեղծիքի, իրավունքի ոտնահարման եւ ամեն չարիքի:

Հայոց բանակում հովվական ծառայության սկիզբը դրվեց հայրենի պետության անկախության առաջին տարիներին՝ երջանկահիշատակ Մեր նախորդ՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Լուսավորչի գահին բազմելով՝ Մենք կարեւոր նկատեցինք բանակում հոգեւոր ծառայության կարգավիճակի ամրագրումը, որն իրականացավ հատուկ հուշագրի ստորագրությամբ՝ պաշտպանության նախարար եւ ներկայիս ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանի հետ: Այնուհետ հովվական ծառայությունը բանակում բարձրացրեցինք Հոգեւոր առաջնորդության աստիճանի: Այսօր գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ, որ հայոց մեծ արքա Աշոտ Երկաթի խաչը, որը կրում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչափայտի մասունքը, հաստատեցինք որպես պահապան խաչ սիրեցյալ մեր բանակին եւ ընծայեցինք բանակային զորատեսակներին օրհնված խաչվառ դրոշներ:

Ազգային-եկեղեցական մեր կյանքում տերունապատվեր առաքելություն ստանձնելու հետ մեկտեղ եկեղեցականները, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի շրջանավարտ սարկավագները անպայմանորեն իրենց ծառայությունն են իրականացնում բանակում՝ հոգեւոր մխիթարություն, քաջալերություն փոխանցելով մեր զինվորներին, զորացնելով նրանց հավատքը, բարձր պահելով մարտական ոգին եւ նրանց աջակիցն ու զորակիցը լինելով հայրենիքի պաշտպանության նվիրական գործում: Ուրախություն է Հայրապետիս համար արձանագրել, որ մինչ այսօր Հայոց բանակում ծառայել է ավելի քան երեք հարյուր հոգեւոր սպասավոր: Արդարեւ, մեր անկախ պետականության քառորդդարյա ընթացքում հոգեւոր սպասավորությունը բանակում ամենակարեւոր ու արգասաբեր անդաստաններից մեկը եղավ, որտեղ ազգային իշխանությանց եւ Հայ Եկեղեցու համագործակցությունը առատ հունձք ապահովեց՝ մեկի դիմաց երեսուն, վաթսուն եւ հարյուր, եւ... (հմմտ. Մարկ. Դ 8):

Սիրելի՛ գնդերեցներ, հոգեւոր սպասավորներ Հայոց բանակի, եկեղեցականների ծառայական կյանքը զինվորություն է, Պողոս առաքյալի խոսքով՝ զինվորություն՝ «Աստծո սպառազինությամբ..., մեր մեջքը գոտեպնդած ճշմարտության Ավետարանով, հագած արդարության զրահը, մեր ոտքերը ամրացրած խաղաղության Ավետարանի պատրաստությամբ, ...հավատի վահանով, փրկության սաղավարտով ու Հոգու սուսերով, որ Աստծո Խոսքն է, որպեսզի կարողանանք չար օրում դեմ կանգնել չարին...» (հմմտ. Ե-փես. Զ 13-17): Հայ եկեղեցականը չի սպասում հրավերի՝ չարի դեմ պայքարելու, չի տատանվում հայրենիքի ու հավատի համար իր կյանքը զոհելու, չի նահանջում, երբ չարն իր նենգ մտադրությամբ անցնում է հայրենյաց սահմանը՝ ավերելու մեր տունը, ոչնչացնելու հայրենական մեր նվիրական սրբությունները: Խաչով ու սրով հայ եկեղեցականը միշտ եղել է հայրենյաց պաշտպանության դիրքերում: Սա է մեր Եկեղեցու սրբազան ու դարավոր առաքելության մեծագույն պատգամը՝ ապրել եւ ծառայել մեր ժողովրդի հոգեւոր ու ֆիզիկական փրկության համար՝ Ավարայրից մինչեւ Արցախ եւ մինչեւ վախճանը ժամանակների: Այդ գիտակցությամբ էր նաեւ Սարդարապատի ճակատամարտում, 1918 թ. մայիսյան հերոսամարտերում, որոնց 100-ամյակը պիտի տոնենք հաջորդ տարի, Գեւորգ Ե Ամենայն Հայոց Երանաշնորհ Կաթողիկոսն իր խրոխտ կեցվածքով ու ոգեշնչումով զորացրեց ողջ ժողովրդին, եւ հայ եկեղեցականները հայոց Հայրապետի օրինակով մեր զորաց հետ աննահանջ պայքարեցին մեր հայրե-

Առաջին լուսավորիչների տոնը

Սկիզբը՝ էջ 1

Ասողիկ քահանան նաեւ խոսեց ս. Գեղարդի հրաշագործ զորության մասին՝ ներկայացնելով պատմության ընթացքում Գեղարդի հետ կապված զանազան հրաշքներ, որոնք կատարվել են ինչպես Հայոց աշխարհում, այնպես եւ հարեւան Վրաստանում:

Վերջում Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության եւ հավատացելոց անունից տեր հայրը շնորհավորեց շնորհազարդ Ամենայն Հայոց Հայրապետին՝ իբրեւ առաքելահիմն ս. Աթոռի գահակալի՝ մաղթելով, որ Աստված զորացնի նրան իր առաքելական կոչման մեջ, որպեսզի Նորին Սրբությունից բխող աստվածային շնորհներն առատապես հեղվեն հոգեւոր դասի վրա եւ նրա միջոցով՝ համայն մեր ժողովրդի եւ աշխարհի: Ասողիկ քահանան նաեւ շնորհավորեց Եկեղեցու սրբազան եպիսկոպոսներին եւ քահանայից հոգեւոր դասին՝ իբրեւ ժիր մատռվակներ՝ ժողովրդին աստվածային օրհնությունը բաշխելու՝ ի Հայաստան եւ ի Սփյուռս աշխարհի:

Սուրբ Պատարագի արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկաներին՝ իր պատգամն ու բարեմաղթանքները փոխանցելով բարեպաշտ ժողովրդին:

Ս. Գեղարդը Մայր տաճարում մնաց մինչեւ Երեկոյան ժամերգության ավարտը՝ աստվածային օրհնություն բաշխելով այս առիթով Մայր Աթոռ այցելած հազարավոր հայ եւ օտարազգի հավատացյալներին:

«Հովհան Օձնեցի Իմաստասեր

Դեկտեմբերի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Կոմիտասյան սրահում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, իր աշխատանքն սկսեց «Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը եւ նրա ժամանակը» գիտաժողովը:

Ս. Հովհան Օձնեցի Կաթողիկոսի գահակալության 1300-ամյակին նվիրված գիտաժողովը կազմակերպվել էր Գուգարաց թեմի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի նախաձեռնությամբ:

Գիտաժողովն սկսվեց Տերունական աղոթքով, որից հետո բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց նաեւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն Արարատ քհն. Պողոսյանը:

Այնուհետեւ ներկաներին իր պատգամն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ողջունելով ամենքին՝ երանելի ս. Հովհաննես Օձնեցի Հայրապետին նվիրված գիտաժողովի գումարման առիթով: Նորին Սրբությունն ընդգծեց, որ գիտաժողովը եւս մեկ առիթ է գնահատելու Հովհաննես Օձնեցի ս. Հայրապետի վաստակը մեր Եկեղեցու եւ ժողովրդի պատմության մեջ, արժեւորելու նրա հարուստ ժառանգությունը, քրիստոնեական հավատքի անաղարտության պահպանման համար նրա կողմից ներդրված նվիրական ջանքերը եւ իր ժողովր-

ՀԻՍՆԱԴՐՄԱՆ 20-ԱՄՅԱԿԸ

նիքի, հավատքի, մեր ժողովրդի ազատ կյանքի եւ իրավունքների պաշտպանության համար: Այսօր դուք, յուրաքանչյուր հայ եկեղեցականի հետ, կոչված եք հոգի ու սիրտ ներդնելով կենսագործելու մեր սուրբ նախնիներից ավանդված առաքելությունը՝ հոգեւոր սպառազինության պաշտպանությունը կերտելու մեր բանակում եւ ամենուր մեր ժողովրդի կյանքում:

Հոբելյանական այս առիթով հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում Հայաստանի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանին, պետական ավագանուն եւ բանակի ողջ հրամկազմին՝ Հայ Եկեղեցու առաքելությունը Զինված ուժերում նվիրական գիտակցումով ու համագործակցության բարձր ոգով արժեւորելու համար: Մեր գնահատանքը ՀՀ պաշտպանության նախարար մեծարգո տիար Վիգեն Սարգսյանին՝ բանակում հոգեւորականների ծառայության հանդեպ առանձնակի ուշադրության, հոգեւոր առաջնորդության գործունեությանն ըստ ամենայնի աջակցելու եւ հատկապես՝ մեր բանակի մարտունակությունն ու ոգին բարձր պահելու նախանձախնդրության համար: Այդ նախանձախնդրության վկայությունն է նաեւ հոբելյանական այս հանդիսությանը եւ նման միջոցառումներին մեծարգո նախարարի մասնակցությունը: Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ՀՀ զինված ուժերի հոգեւոր առաջնորդին՝ Գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին, հոգեւոր առաջնորդության գնդերեցներին՝ մաղթելով իրենց նվիրական առաքելության մեջ նորանոր հաջողություններ: Նոր ձեռքբերումներ ենք մաղթում մեր քաջարի բանակին, պանծալի ծառայություն՝ բոլոր սպաներին ու մարտիկներին: Աղոթում ենք, որ Աստված Իր Աջի ներքո պահպանի ձեզ եւ օրհնի ձեր եւ ձեր ընտանիքների կյանքը:

Թող խաղաղությունը ամուր ու հաստատուն լինի հայրենի մեր սահմաններում: Թող երկնավոր Տերը պահպանի մեր ժողովրդին եւ զորացնի ու բարօր դարձնի հայրենի մեր երկիրը: Թող արգասաբեր ու պտղաբեր լինի մեր Եկեղեցու առաքելությունը՝ ի փառս Աստծո եւ ի պայծառություն ազգիս:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն»:

Ներկաներին հոբելյանի առիթով շնորհավորեց նաեւ ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը:

Պաշտպանության նախարարն անդրադարձ կատարեց Հայոց Եկեղեցու կարեւոր առաքելությանը ազգային կյանքում եւ ինքնության պահպանության գործում. *«...Մենք այս օրերին հաճախ ենք լսում աշխարհում ընդունված այն իրականությունը, որ պետությունը եւ Եկեղեցին պետք է անջատ լինեն միմյանցից, Եկեղեցին եւ բանակը պետք է անջատ լինեն միմյանցից, քանզի ասում են, որ դա է ժողովրդավարության եւ 21-րդ դարի թելադրանքը: Բայց մի՞թե դա համահունչ է մեր ժողովրդի իղձին եւ մեր ժողովրդի կոչմանը: Մի՞թե դա է աշխարհի առաջին քրիստոնյա պետության խորհուրդն ու իմաստությունը: Մենք 26 տարի առաջ սկսեցինք կերտել պետականություն մի իրականության մեջ, որտեղ ունեինք մշակույթ, լեզու, գիտություն, որ կտոր-կտոր հավաքել էինք աշխարհով սփռված մեր Սփյուռքից՝ որպես Ցեղասպանության հետեւանք: Եվ ունեինք մի ամուր հիմք, որի վրա մեր ազգային ինքնությունը դարեր շարունակ պահպանվեց որպես ուժ, եւ այդ ուժը, այդ առանցքը Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին էր: Պետականության բացակայության դարերի ընթացքում հենց այդ Եկեղեցին է կրել մեր ժողովրդին միավորելու, կրթելու, կազմակերպելու եւ անհրաժեշտության դեպքում մարտի դաշտ տանելու պետական բոլոր գործառույթները: Եվ թեեւ մենք չունեինք այն ինստիտուտները, որոնք անհրաժեշտ էին որպես հիշողություն՝ ուժեղ պետականություն կերտելու համար, մենք ունեինք անհամեմատ մեծ ուժ, քանի տասնյակ հազար քառ. կմ տարածություն ունեցող երկիր: Այդ իրականության հետ, ինչպես նաեւ բիբլիական Արարատի հովանու ներքո՝ մենք առաքելություն ունեցող եւ հատուկ ուժ ունեցող ժողովուրդ ենք: Դրա համար մեր պարագայում շատ տրամաբանական եւ հասկանալի է, որ Եկեղեցին չի կարող անջատ լինել ո՛չ պետությունից եւ ո՛չ էլ բանակից: Դա ամրագրված է մեր Սահմանադրության մեջ, դա ամրագրված է մեր օրենսդրության մեջ եւ ամենակարեւորը՝ յուրաքանչյուր հայի սրտի մեջ»*:

որը թույլ տվեց միանգամից ոտքի կանգնել եւ կանգնեցնել ինչպես պետությունը, այնպես էլ բանակը:

...Աշխարհի բոլոր եղած եւ ապագայում լինելիք պետություններից մեզ տարբերում է մի բան՝ աշխարհի առաջին քրիստոնյա պետություն լինելու խորհուրդը: Շատ շատերն են ուզում, որ այդ խորհուրդը դուրս գա մեր ինքնագիտակցությունից, որովհետեւ այդ դեպքում մենք դառնում ենք 3 մլն. բնակչություն եւ մի դանիշը հաղթանակի եւ պայքարի: Խոսելով մեր օրերում ՀՀ զինված ուժերում հոգեւոր առաջնորդության առաքելության մասին՝ ՀՀ պաշտպանության նախարարը մասնավորապես նշեց. «Դա այն ուժն է, որը պետք է մեր բանակը դարձնի յուրահատուկ, դա այն ուժն է, որը պետք է ազգային ոգի եւ նոր միջավայր ձեւավորելու կարեւոր միջոց դառնա մեր Զինված ուժերում: Բանակի 25-ամյակին նվիրված միջոցառման ժամանակ Վեհափառ Հայրապետին շնորհակալություն հայտնեցի եւ ուզում եմ կրկնել այսօր՝ բանակում գնդերեցների ծառայության համար, որովհետեւ գնդերեցները մեր զինված ուժերում ե՛ւ ավագ ընկեր են, ե՛ւ հոգեբան, ե՛ւ այն կարեւոր հոգեւոր ուղղորդիչը, որին հավասարվում են մեր զինվորները»:

Այնուհետեւ ներկաները դիտեցին «Աղոթող զինվոր» ֆիլմը՝ նվիրված Հոգեւոր առաջնորդության գործունեությանը:

Հանդիսության գեղարվեստական հատվածում ելույթներ ունեցան ՀՀ ԶՈՒ փողային նվագախմբը, Մայր Աթոռի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը, «Ծաղկազարդ», «Գեղարդ», «7 նոտա» երգչախմբերը, «Նարեկացի» նվագախումբը եւ «Նժդեհ» պարախումբը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, ՀՀ ՊՆ ներկայացուցիչներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններ, զինծառայողներ, գնդերեցներ, 20 տարիների ընթացքում Հոգեւոր առաջնորդությունում իրենց ծառայությունը բերած եկեղեցականներ եւ այլ հրավիրյալներ:

Կաթողիկոսը եւ Ճրա ժամանակը» գիտաժողով Մայր Աթոռում

դին անկորուստ պահպանելու խնամքն ու հոգածությունը: Վեհափառ Հայրապետը սա նաեւ բազմաշնորհ Հայրապետի եկեղեցանվեր ու հայրենանվեր ոգով նորոգվելու առիթ նկատեց.

«Մեր ժողովուրդը սրբացրել է Հովհաննես Օձնեցի Կաթողիկոսին եւ իր երեւելի հովվապետին մեծարել «Իմաստասեր» անվամբ: Իմացության եւ գիտության հանդեպ սերը, ինչպես նաեւ առաքինությամբ եւ հոգեւոր սխրանքներով լեցուն կյանքը լավագույնս նկարագրում են նրա կերպարը: Նրա անձի մեջ ի մի են եկել քաջիմաց աստվածաբանի, շնորհաշատ քարոզչի ու հռետորի, խոհեմ առաջնորդի ու դիվանագետի հատկանիշները: Նա հիշվում է որպես «երկրորդ Ոսկեբերան», Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի գործը շարունակող մեծ իմաստասեր եւ նոր առաքյալ:

Երանաշնորհ Հայրապետը մեծ բարեհորոգիչ էր: Մեր Եկեղեցու փառավոր էջերից է նրա ընդամենը տասնամյա գահակալությունը, որի ողջ ընթացքում Հովհաննես Օձնեցին հետեւողական պայքար մղեց Հայաստանում քրիստոնեության անաղարտ պահպանման, մեր Եկեղեցու դավանանքն ու ծեսը տեսակայնորեն հիմնավորելու եւ այդ ծիրում մեր Եկեղեցու քրիստոսաբանական նկարագիրն ամբողջացնելու համար: Իր Ճառերով, ծիսական կանոններով եւ դրանց մեկնաբանությամբ, Կանոնագրքի կազմումով, անգամ անգուգական շարականներով ու հոգեւոր երգերով, որ կրում են նրա աստվածաբանական մտքի դրոշմը եւ հավատքի երկնաթռիչ շունչը, Հովհաննես Օձնեցի Հայրապետը, ամենայն իրավամբ, համարվում է մեր ուղղափառ հավատքի հիմնասյուներից մեկը:

Հայկական պետականության բացակայության պայմաններում Հովհան Օձնեցին նաեւ խոհուն եւ քաջ առաջնորդ եղավ: Իր իմաստությամբ ու հոգեւոր նկարագրով կարողացավ շահել արաբ խալիֆի վստահությունը եւ մեծ պատերազմներով լի ժամանակում իր ժողովրդին հեռու պահել նոր փորձություններից ու համախմբել մեր Եկեղեցու հովանու ներքո: Մեր ժողովրդի ապահովության, նրա հավատքի անսասանության եւ քրիստոնեական կյանքի ամրության համար մեծ Հայրապետի հոգածությունն ու արդյունավոր ջանքերն առ այսօր հիասքանչ օրինակ են մեզ եւ հետագա սերունդների համար: Արդարեւ, այսօր էլ, երբ օրվա հրամայական է դիմագրավումը զանազան գաղափարախոսությունների, որոնք միտված են մեր Եկեղեցու դավանանքից, ծեսից իր զավակներին հեռացնելուն, ազգային միասնությունը քայքայելուն, Հովհաննես Օձնեցու գործունեությունը վերիմաստավորման եւ վերարժեւորման մի նոր ու կարեւոր խորհուրդ է ստանում:

Մեծագործ Հայրապետի 1300-ամյակը հրավեր է վառ պահելու նրա սուրբ հիշատակը եւ ավելի վառ՝ այն սերը, որով Հայոց հոգելույս Հայրապետը պայծառ է պահել Հայ Եկեղեցու լույսը եւ իր կյանքով ավելացրել պայծառությունը հոգեւոր մեր տան: Սա է նրա մեծագույն պատգամը, հայրական հորդորն ու խրատը մեզ: Եվ չկա ավելի մեծ գնահատական նրա կյանքին ու գործին, քան մեր հավատարմությունը նրա թողած անգնահատելի ժառանգությանը եւ առաքելաշավիղ ընթացքին»:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքն ու օրհնությունը բերեց գիտաժողովի կազմակերպիչներին եւ նախանձախնդրությամբ այս գիտաժողովին համախմբված բոլոր մասնակիցներին:

Բարձրյալի օրհնության հայցով Նորին Սրբությունն արդյունավոր ընթացք ու հաջողություններ մաղթեց գիտաժողովի աշխատանքներին:

Հայրապետական ողջույնից հետո սկսվեց գիտաժողովի լիագումար նիստը, որը նախագահեց Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանը:

Նիստին ներկայացվեցին Հովհան Օձնեցու ժամանակաշրջանին, կյանքին, գործունեությանը եւ մատենագրական վաստակին վերաբերող հետեւյալ զեկուցումները՝ «Հովհաննես Օձնեցի. «Կանոնագիրք հայոց»-ի սոցիալ-փիլիսոփայական եւ կառավարչական հիմքերը» (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյան եւ փ. գ. դ. Վալերի Միրզոյան), «Դամասկոսում Հովհան Օձնեցու կնքած «պայմանագրի» գնահատման հարցի շուրջ» (փ. գ. դ. Սեյրան Զաքարյան) եւ «ԺԴ տիտղոսների բյուզանդական Կանոնագրքի հայերեն թարգմանությունը եւ «Կանոնագիրք Հայոց»-ը» (պ. գ. դ. Ազատ Բոզոյան):

Լիագումար նիստից հետո զուգահեռաբար նիստեր տեղի ունեցան ճեմարանի Կոմիտասյան սրահում եւ Մատենադարանում:

Գիտաժողովի ավարտին տեղի ունեցավ նաեւ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Շախկյանի «Հայրապետական Աթոռին փառքը» գրքի շնորհանդեսը:

«Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Դեկտեմբերի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տանն Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ եւ ՀՀ կրթության ու գիտության նախարար տիար Լեւոն Մկրտչյանի մասնակցությամբ» տեղի ունեցավ Հայոց պատմության, Հայոց Եկեղեցու պատմության, հայոց լեզվի եւ գրականության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության ուսուցիչների եւ դասվարների՝ «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթի 2017 թ. մրցանակաբաշխությունը:

Մրցույթն իրականացվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ եւ ՀՀ կրթության ու գիտության նախարարության ու Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի համատեղ ջանքերով: 2003 թվականից իրականացվող ամենամյա մրցանակաբաշխության բարերարն է Սիլվա Տեր-Ստեփանյանը (ԱՄՆ):

Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով, այնուհետեւ ներկաներին ողջունեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը: Սրբազանն ընդգծեց, որ «Լավագույն ուսուցիչ» մրցույթը գալիս է համալրելու տարվա կարեւոր ձեռքբերումների շարքը եւ միտված է կրթական համակարգի քաջալերանքին. *«Եկեղեցին միշտ ստանձնել է կրթական համակարգի առաջամարտիկը լինելու առաքելությունը, եւ մեր օրերում եւս այն, Հայոց Հայրապետի առաջնորդությամբ եւ իմաստությամբ, ստանձնել է ուսուցիչների մեծարանքը: Այնտեղ, որտեղ լույս կա, այդ լույսը պետք է դրվի բարձր տեղում, որպեսզի լուսավորի շատ մանուկների մտքեր...»*:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաեւ ՀՀ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը՝ նշելով, որ ուսուցչի աշխատանքն ունի տեւական արժեւորման կարիք, եւ Մայր Աթոռի հետ համատեղ իրականացվող միջոցառումն այդ գնահատանքն է: *«Այս մրցույթը Ս. Էջմիածնի բազմաբնույթ ներկայությունն է կրթության համակարգում, որն օգնում է բոլորիս՝ ձեւավորելու գիտակից եւ քաղաքակրթական մեր տեսակին բնորոշ սերունդ: Հաճախ կրթությունը դիտարկվում է սոսկ իբրեւ գիտելիք, սակայն իրականության մեջ կրթված մարդ լինելու համար գիտելիքն անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է: Կրթված մարդն այն տեսակն է, որն ունի այժմեական գիտելիքներ, որոնք օգտագործում է բարձր նպատակների համար: Դա մեր ժողովրդի, մեր տեսակի շարունակական զարգացումն է աշխարհի խառնամբոխում եւ խռովահույզ այս ժամանակներում»*,- ասաց Լեւոն Մկրտչյանը՝ շնորհակալություն հայտնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ կրթության համակարգում արժեքային կարեւոր դերակատարման համար: Նախարարը շնորհակալություն հայտնեց նաեւ մանկավարժական հանրույթին՝ ամենօրյա անխոնջ աշխատանքի համար, որով ապահովվում է երկրի կայունությունը եւ քայլ առ քայլ զարգացումը:

Խոսք ասաց նաեւ ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ տիկին Ռուզաննա Մուրադյանը՝ Եկեղեցի-պետություն համագործակցության կարեւոր վկայություն նկատելով այս մրցանակաբաշխությունը եւ անդրադառնալով Եկեղեցու դերակատարությանը՝ մատաղ սերնդի արժեքային համակարգի ձեւավորման գործում:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ ԿԳ նախարարը հաղթող ուսուցիչներին հանձնեցին մրցույթի մասնակցության վկայականներ, հոգեւոր գրականություն ու դրամական պարգեւներ:

Առաջին մրցանակ շնորհվեց Հայոց պատմության ուսուցչուհի Գայանե Խանամիրյանին (Գեղարքունիք, Գավառի հ. 3 հիմն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Արմենուհի Խաչատրյանին (Շիրակ, Արթիկի հ. 6 հիմն. դպրոց), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Գոհար Հայրունուն (Եր., Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմն. դպրոց), դասվար Թամարա Միրզոյանին (Եր., Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմն. դպրոց), կենսաբանության ուսուցչուհի Անահիտ Կարապետյանին (Շիրակ, Ջրափիի միջն. դպրոց) եւ ֆիզիկայի ուսուցիչ Աշոտ Արտոյանին (Շիրակ, Գյումրու «Ֆոտոն» վարժարան):

Երկրորդ մրցանակի արժանացան Հայոց պատմության ուսուցչուհի Սուսաննա Սաղաթելյանը (Ա-

ղարագածոտն, Օշականի միջն. դպրոց), Հայոց պատմության ուսուցչուհի Թամարա Կարապետյանը (Շիրակ, Գյումրու հ. 6 հիմն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Նաիրա Պետրոսյանը (Արարատ, Այնթապի հ. 2 միջն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Նազիկ Գիշյանը (Լոռի, Վանաձորի հ. 19 հիմն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցչուհի Վարդուհի Ղազարյանը (Շիրակ, Գյումրու հ. 6 հիմն. դպրոց), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Աստղիկ Սահակյանը (Տավուշ, Իջ. վարժարան), հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Սուսաննա Հակոբյանը (Եր., հ. 105 ավագ դպրոց), դասվար Էլլա Մարտիրոսյանը (Կոտայք, Հրազդանի հ. 9 հիմն. դպրոց), ֆիզիկայի ուսուցչուհի Գայանե Մարտիրոսյանը (Շիրակ, Գյումրու հ. 37 ավագ դպրոց), ֆիզիկայի ուսուցչուհի Սուսաննա Տոնոյանը (Արմավիր, Վաղարշապատի հ. 6 հիմն. դպրոց):

Երրորդ մրցանակի արժանացան Հայոց պատմության ուսուցիչներ Լիանա Մատինյանը (Լոռի, Վանաձորի հ. 10 ավագ դպրոց), Ռուզաննա Դիլաքյանը (Կոտայք, Լեռնանիստի միջն. դպրոց), Արկադի Ակոպովը (Շիրակ, Մայիսյանի միջն. դպրոց), Հայոց Եկեղեցու պատմության ուսուցիչներ Կարինե Սարգսյանը (Արագածոտն, Մաստարայի միջն. դպրոց), Նվարդ Հովսեփյանը (Եր., Ալ. Պուշկինի անվան հ. 8 հիմն. դպրոց), հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչներ Աստղիկ Բոստանչյանը (Գեղարքունիք, Գավառի հ. 5 հիմն. դպրոց), Լիանա Իկիլիկյանը (Շիրակ, Ազատանի միջն. դպրոց), Հերիքնազ Կարապետյանը (Եր., հ. 118 ավագ դպրոց), Տիգրան Սարգսյանը (Եր., «Տաթեւ» դպրոց), դասվարներ Նոնա Պողոսյանը (Կոտայք, Աբովյանի հ. 10 հիմն. դպրոց), Ալվարդ Ղազարյանը (Եր., «Վարդանանք» կրթահամալիր), քիմիայի ուսուցչուհի Լուիզա Վարդանյանը (Սյունիք, Գորիսի հ. 4 ավագ դպրոց):

Շարունակությունը՝ էջ 5

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ 16-19, 21-22

2.

Նկատենք սակայն, որ ընթերցողներին այսպիսի հեռավոր անցյալ տեղափոխելով՝ Ռասսելն աչքի առաջ ունի ընդամենն իր գրասեղանին դրված Ագաթանգեղոսի հայերեն Պատմությունը, որտեղ ամբողջ հայ մատենագրության մեջ սոսկ մեկ անգամ հանդիպում է Նանե աստվածուհին: Խոսքը վերաբերում է այն դրվագին, որտեղ Գրիգոր Լուսավորիչը Տրդատ թագավորի հետ միասին ջարդուփշուր է անում Նանեի բագինը *(Ագաթ., պրգ. 786. «Եւ անտի ընդ գետն Գայլ յայնկոյս անցանէին, եւ քանդէին զՆանէական մեհեանն դստերն Արամազդայ ի Թիլն յաւանի»)*: Իսկ այս մեկ անգամ գործածված Նանե աստվածուհու անունը Ռասսելին հետաքրքրում է սոսկ իր հետապնդած սեռական խեղաբանության համար, որպեսզի Գրիգոր Լուսավորչի ջարդուփշուր արած Նանեի բագինը եւս ներքաշի իր պրոֆեսորական արյունապղծության մեջ. «Նանան հաճախ ուղղակիորեն նույնացվում էր Մայր աստվածուհու հետ,- շարունակում է իր միտքը Ռասսելը,- այսպիսի հավասարեցումը տրամաբանորեն կապված է վերը նշված լեգենդի հետ, որտեղ պարզորեն ակնարկվում է, որ երիտասարդի եւ աստվածուհու միջեւ հարաբերությունը մոր եւ որդու արյունապիղծ միություն էր: Ինչպես Մեծ մայրը, այնպես էլ Ատտիսը, կոչվում էին բազմաթիվ անուններով: Հեռավոր Սոգդիայում, ինչպես կտեսնենք, Նանա աստվածուհին պատկերվում էր երիտասարդ Սիյավաքշի մահվան համար սգալիս, մինչդեռ Հայաստանում հավատում էին, որ ասսուրական թագուհի վավաշոտ Շամիրամը սպանել էր իր երիտասարդ սիրեցյալ Արա Գեղեցիկին, ով մահից վերակենդանացել էր գերբնական շնակերպ արարածների շնորհիվ» *(James R. Russell, էջ 236-237)*:

Ակնհայտ է, որ 4000 եւ 6000 տարվա անդրպատմական առասպելները որեւէ կապ չունեն հնադարյան Հայաստանի պատմության հետ: Պարզապես Նանայի արձանի վերաբերյալ այս ամբողջ «հնագիտական շեղումները» (ոչ՝ պեղումները) եւ նրա առաջ բերած այլասերման պաշտամունքը Աքեմենյան Իրանում՝ բազում այլ էջերի հետ միասին պրոֆեսոր Ռասսելը չի զլացել մատուցել անգլիացի ընթերցողին միմիայն այն պատճառով, որ Ագաթանգեղոսի հայերեն Պատմության մեջ պատահաբար հայտնվել է Գրիգոր Լուսավորչի ջարդուփշուր արած Նանեի արձանը: Ի դեպ, Ագաթանգեղոսի հունարեն Պատմության այս նույն դրվագում ներկայացված է Աթենա աստվածուհին, եւ Գրիգոր Լուսավորիչը ջարդուփշուր է անում Աթենայի բագինը *(Ագաթանգեղոս Պատմություն Հայոց. [Աշխարհաբար թարգմանությունը ներածականով ու ծանոթագրություններով՝ Արամ Տեր-Ղեւոնդյանի], Եր., 1977, ծան. 35, էջ 176. «Թագավորն իր բոլոր ենթականերով անցավ Եփրատ գետը եւ հասավ Թիլ ավանը: Այնտեղ եւս նա կործանեց Աթենայի տաճարը, իսկ սրբազան սպասները նույնպես հրամայեց պահել Թիլ ավանում՝ նվիրելով այն կառուցվելիք եկեղեցուն»)*: Անհասկանալի է նույնիսկ, թե հունարեն բնագիրը թարգմանելիս ի՞նչ հիման վրա է հայ թարգմանիչը փոխել աստվածուհու անունը:

Գր. Խալաթյանցը մեղադրում է Մովսես Խորենացուն, որ նա Հայաստանում պաշտված տեղական ազգային աստվածությունները կոչել է բացառապես հունական անուններով: Նույնիսկ Հայաստանում լայնորեն ճանաչված այնպիսի աստվածություն, ինչպիսին Անահիտն է, որը հայտնի է շատ դասական գրողներին, հայ պատմիչը չի հիշատակում. «Ճիշտ նույն ձեւով էլ նրա մոտ որեւէ հիշատակություն չկա Աստղիկի, Միհրի, Տիրի եւ Նանեի մասին: Սակայն, չնայած Խորենացու կողմից ազգային աստվածությունները ժխտելու հանգամանքին, նրա պանթեոնը ամբողջապես փոխ է առնված Ագաթանգեղոսից, սոսկ այն տարբերությամբ, որ հայկական աստվածությունների անունների փոխարեն տրված են նրանց հունարեն համարժեքները: Այսպես, Ագաթանգեղոսի Արամազդը համապատասխանում է Խորենացու Դիոսին, Անահիտը - Արտեմիդային, Աստղիկը - Աֆրոդիտեին, Միհրին - Հեփեստոսը, Տիրին - Ապոլլոնը, Նանեին - Աթենան եւ Վահագնին - Հերակլը» *(Г. Халатьянц. Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. Москва, 1896, глава XI, с. 289)*: Այս հանգամանքին իրավացիորեն ուշադրություն է դարձրել եւ Ռասսելը, որը տարակուսած է, որ Մովսես Խորենացին Անահիտին հիշատակում է միայն որպես Արտեմիս, բայց երբեք չի տալիս նրա իրանա-հայկական անունը, սակայն աստվածուհու ինքնությունը կասկածի տեղիք չի տալիս *(James R. Russell, էջ 248)*: Սակայն ես նույնպիսի թեթեւությամբ չեմ կարող համաձայնել Ռասսելի վերջին պայմանին: Թեեւ հունական եւ հռոմեական շատ աստվածություններ զույգ առ զույգ միայն հելլեն եւ լատին անուններով են տարբերվում իրարից, ինչպես Զեւս եւ Յուպիտեր, Աֆրոդիտե եւ Վեներա (Վենուս), Աթենաս եւ Միներվա եւ այլն, բայց նույն աստվածությունները արեւմտյան եւ արեւելյան ժողովուրդների մեջ էական տարբերությամբ են ընկալվել:

Շարունակությունը՝ էջ 6

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ թիվ 20, 22

2.

Ավ. Իսահակյանին, Վ. Նավասարդյանին եւ Ավ. Ահարոնյանին հանդիպելիս Չարենցը դեռեւս բոլշեւիզմի համոզված պաշտպան էր. դրա հիմնավորումն են նրա երեք ստեղծագործությունները՝ գրված արտասահմանում երեք դաշնակցականների հետ հանդիպումներից ստացած անմիջական տպավորություններով՝ «Էլեգիա՝ գրված Վենետիկում» պոեմը՝ Ավ. Իսահակյանի հետ հանդիպման առիթով *(այս մասին մանրամասն տե՛ս մեր «Անդրադարձ Ավետիք Իսահակյանի եւ Եղիշե Չարենցի գրական բարեկամությանը» ուսումնասիրությունը. Գրական հանգրվաններ, գիրք Ա, Եր., 2003)*, «Հանգուցյալ Պարոնը կամ Պարոն Հանգուցյալը» արտասահմանյան պատմվածքը՝ Վ. Նավասարդյանի հետ Հռոմում հանդիպելու առիթով, եւ «Սեւրի դաշնագրից մինչեւ հայ կանանց ալեծուփ մազերը» հոդվածը՝ Փարիզում Ավ. Ահարոնյանի՝ հեթանոսական գրական շարժման մասին մի դասախոսության առիթով: Սրանցից այս պահին մեզ բնականաբար առավել հետաքրքրում է երկրորդը՝ Նավասարդյանի առիթով գրվածը, որը մի կողմից ճշմարտացիորեն բացահայտում է Չարենց-Նավասարդյան անձնական հարաբերությունը, Չարենցի ստեղծագործական հոգեբանության եւ սփյուռքում գործող հայ քաղաքական կուսակցությունների հանդեպ նրա վերաբերմունքն ու դիրքորոշումը, մյուս կողմից՝ լույս է սփռում խորհրդային պետություն - սփյուռք առնչությունների վրա:

Ինչպես երեւում է խնդրո առարկա գրքի առաջին՝ 1957 թ. հրատարակության՝ «Մ. Թ.» ստորագրությամբ կարճառոտ «Երկու խոսք»-ից (կարծում ենք՝ հեղինակը Մինաս Թեոլոյանն է - Ս. Մ.), Նավասարդյանի գիրքը թեեւ պատրաստ է եղել 1945 թ. *(Մ. Թ.-ի այն հայտարարությունը, թե Նավասարդյանի գիրքը պատրաստ է եղել 1945 -ին, ակնհայտ վրիպում է, որովհետեւ այդ գրքում հանգամանորեն վերլուծված են 1946 թ.կայացած Հայաստանի գրողների միության համագումարի նյութերը, ինչպես նաեւ նույն թվին լույս տեսած «Ընտիր էջեր» մեծադիր հատորում Չարենցի անունով ստորագրված՝ Ստալինին հասցեագրված թուղթ-ուղերձ-ձոներգերը - Ս. Մ.)*, սակայն լույս է տեսել 1957 թ.՝ բանաստեղծի ծննդյան 60 եւ մահվան 20-ամյակների առթիվ, այսինքն՝ ավելի քան կես դար առաջ Կահիրեում, եւ ամաչելու չափ հասկանալի պատճառներով անմատչելի է եղել հայաստանցի ընթերցողին: Իսկ դա քսանամյա «մեծ լռության» շրջանում Չարենցի մասին գրված ամենից կարեւոր գիրքն էր, որ փաստերի ճշմարտացի ներկայացման հետ միասին պարունակում էր Չարենցի որոշ ստեղծագործությունների գրականագիտական խոր եւ ինքնատիպ վերլուծություններ:

Վ. Նավասարդյանի՝ Չարենցի մասին հուշերի եւ խորհրդածությունների գրքի վերահրատարակումը, անշուշտ, էականորեն մեծացնում է նրա հետ ընթերցողի շփման հնարավորությունը, որով պարզ է դառնում նաեւ, թե ինչու եւ ինչ էին թաքցնում խորհրդային իշխանությունները ժողովրդից: Գիրքը, իհարկե, չի ընդգրկում Չարենց բանաստեղծական երեւույթն իր ամբողջությամբ, սակայն

նրա էջերում մի կողմից հստակորեն երեւում են չարենցյան երկերի այլ հայացքով ընթերցումն ու անկողմնակալ մեկնաբանությունը, քաղաքական երկու ընդդիմախոսների լայնախոհությունը, ազնվությունն ու արդարամտությունը, մյուս կողմից՝ Վ. Նավասարդյանի՝ խորհրդահայ գրական անցուդարձին ու քննադատական մտքին քաջատեղյակությունը եւ այդ համապատկերում՝ Չարենց երեւույթի մարդկային ու գրողական նկարագրի, նրա երկերի գեղարվեստական արժեքի սթափ ու անկողմնակալ գնահատությունը:

Բարիկադի տարբեր կողմերում կանգնած գաղափարական երկու հզոր հայ մտավորական գործիչներ. մի կողմում՝ **մեծ հային ու հավատավոր բոլշեւիկին իր վիթխարի անհատականության մեջ միավորող հանճարեղ բանաստեղծ՝ նույնիսկ իր բարեխիղճ մոլորությունների մեջ էլ բացառիկ անկեղծությամբ,** մյուս կողմում՝ **նույնքան անկեղծ ազգային քաղաքական գործիչ, հավատավոր դաշնակցական, քսաներեք գրքերի հեղինակ, որը խոհեմորեն ու հանդուրժողաբար մի կողմ է դրել բոլշեւիզմի գաղափարական պարտադրանքով Չարենցի կողմից դաշնակցականներին հասցեագրված մի քանի կոշտ ու կոպիտ արտահայտությունները, արդարամտորեն գնահատել է հեղափոխական թոհուբոհի մեջ նրա ազգային մտածողությունը, ստեղծագործական նվաճումներն ու գեղարվեստական հզոր թռիչքները:**

Մենք առ այսօր Չարենցի գրական ժառանգությունը թեեւ հաճախ, բայց լավ չենք հրատարակել. նույնիսկ լավագույն հրատարակություններում կամա թե ակամա տեղ են գտել տեքստերի բնագրային աղավաղումներ՝ ձեռագրերի սխալ կամ միտումնավոր ընթերցման պատճառով, գլավլիտային մկրատով անխիղճ կրճատումներ, անգամ ընթեռնելի, բայց «անթույլատրելի» բառերի, անունների, դարձվածների, տողերի, ամբողջական պարբերությունների ու հատվածների կրճատումներ՝ փոխարենը անընթեռնելիության նշան կետեր դնելով:

Շարունակությունը՝ էջ 8

«Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխությունը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Սկիզբը՝ էջ 4

Վկայականներ եւ նվերներ հանձնվեցին նաեւ մրցույթին մասնակցած մնացյալ 70 ուսուցիչներին:

Առաջին մրցանակի արժանացած տիկին Գոհար Հայրունին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին, ԿԳ նախարարին եւ բոլոր կազմակերպիչներին՝ ուրախությամբ արձանագրելով, որ մրցույթի միջոցով կարեւորվում է ուսուցչի դերը հանրային կյանքում:

Հանդիսության շրջանակներում գեղարվեստական կատարումներով հանդես եկան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Գյումրիի հայորդյաց տան երգչախումբն ու «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տան նվագախմբերն ու պարախումբը:

Ցերեկույթի վերջում մասնակիցներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ողջունելով բարի ավանդույթ դարձած հանդիսության առիթով Մայր Աթոռում մեկտեղված կրթության մշակներին՝ Վեհափառ Հայրապետը մասնավորապես նշեց. *«...Մրցանակաբաշխությունը կոչված է վերարժեւորելու մեր մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը նվիրված ուսուցիչների աշխատանքը, նաեւ գնահատելու եւ քաջալերելու մեր ուսուցիչներին՝ իրենց պատասխանատու եւ նվիրական առաքելության մեջ:*

Աստվածաշնչյան Ժողովողն ասում է. «Մարդու իմաստությունը լույս է տալիս նրա երեսին» (Ժող. Ը 1): Սուրբգրային խոսքի շնորհընկալներն այսօր դուք եք, սիրելի՛ ուսուցիչներ, որ հարստացած գիտելիքներով եւ հոգու իմաստությամբ՝ լույս եք տալիս ձեր սաներին, ձեր կողմից կրթվող ու դաստիարակվող սերունդներին, որպեսզի նրանք եւս լուսավորվեն, ճանաչեն կյանքի իմաստը, առաջնորդվեն հոգեւոր արժեքներով եւ կարողանան հաղթահարել իրենց առջեւ բարձրացող խնդիրներն ու փորձությունները: Արագորեն զարգացող եւ փոփոխվող այսօրվա աշխարհում ուսումն ու կրթությունը, նկարագրի, անհատականության ձեւավորումը առաջնահերթ են ազգի եւ պետության համար: Արդ, դուք՝ խոնարհ ու պարզ սպասավորներդ գիտության ու կրթության, ձեր մտային ու հոգեւոր իմաստության լույսով ի զորու եք առողջ եւ զորավոր սերունդ պատրաստելու, ովքեր պիտի շենացնեն մեր հայրենի երկիրն ու ազգային կյանքը, պիտի պահպանեն մեր սահմանները եւ պիտի պաշտպանեն մեր ժողովրդի իրավունքները: Մենք համոզված ենք, որ այս գիտակցությունը, այս տեսլականը ամեն օր ձեր աշխատանքում ներշնչում են ձեզ՝ հավելելով կորով ու նվիրում:

Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Կրթության եւ գիտության նախարարությունը ջանում է արդիական դարձնել կրթությունը մեր երկրում, արժանի կերպով գնահատել մանկավարժների աշխատանքը: Ուրախ ենք, որ ամրանում է մեր Եկեղեցու եւ նախարարության համագործակցությունը՝ ի նպաստ մեր զավակների հոգեւոր ճանաչողության, նրանց հոգում հավատքի սերմանման, որպեսզի ընթանան ճշմարիտ ուղիով, լինեն արժանավոր զավակները մեր երկրի ու ժողովրդի: Լինել երջանիկ ազգ՝ ծաղկուն պետությամբ եւ ազգային կյանքով. սա պիտի լինի նաեւ մեր կրթության նպատակը»:

Նորին Սրբությունը հայրապետական իր գնահատանքը բերեց ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը եւ նախարար Լեւոն Մկրտչյանին՝ Եկեղեցու նախաձեռնություններին աջակցելու համար, ինչպես նաեւ մրցանակաբաշխության կազմակերպիչ, Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպիսկոպոսին եւ ՔԴԿ-ի աշխատակիցներին:

Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունը հղեց մրցանակաբաշխության բարերարին՝ մաղթելով, որ ամենաբարին Աստված օրհնի մեծազնիվ բարերարին եւ վարձահատույց լինի իրագործած եկեղեցանվեր եւ ազգանվեր գործերի համար:

Գարեգին Բ Կաթողիկոսն Աստծո ամենախնամ հովանին եւ առաջնորդությունը կամեցավ մանկավարժներին եւ կրթության բնագավառի պատասխանատուներին՝ բարձրորեն գնահատելով նրանց նախանձախնդիր ջանքերը, աղոթք բարձրացրեց առ Աստված, որ լուսավոր պահի միտքն ու հոգին երեխաների եւ կրթության սպասավորներին պարգեւի նոր կորով ու եռանդ, արդյունավոր ջանքեր՝ ի նպաստ ազգային մեր բոլոր կրթաջախների օրավուր բարգավաճման եւ պայծառացման:

Հանդիսությունը փակվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով:

Լրատվական նյութերը՝
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՑԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 22

Պարզվում է, որ օտարազգիներն առանձնապես հիացած չեն հայերով: Օրինակ՝ Ռիշար Լյա Պիեռը բավական շատ բացասական կողմեր է տեսնում հայերի մեջ: Որոշ օտարազգիների խիստ քննադատական մոտեցումը հայ ժողովրդի նկատմամբ այնպիսի տպավորություն է ստեղծում, որ այդ մարդիկ ակնհայտորեն թուրքամետ են: Այստեղ, անշուշտ, ոչ մի զարմանալի բան չկա, քանզի որեւէ ազգին տրված գնահատականները կարող են խիստ սուբյեկտիվ եւ չափազանցված լինել: Ասենք ավելին. առնվազն տարօրինակ կլիներ, եթե անխտիր բոլոր այլազգիները հիացական գնահատականներ տային հայերին: Որքան էլ որոշ մտավորականներ պնդում են, թե հայերը եվրոպական ազգ են, միեւնույն է, արեւելյան հատկությունները բավականաչափ բնորոշ են մեր ազգին: Ուստի պատահական չէ, որ ֆրանսիացին, գերմանացին, անգլիացին կամ որեւէ այլ եվրոպացի ժողովուրդ ոչ մի կերպ չեն կարողանում ընկալել հայկական մտածելակերպը, հայերի վարքն ու բարքը, նրանց սովորույթներն ու արժեհամակարգը: Այսպես, օրինակ, Լյա Պիեռը 1930-ական թվականներին հայերի մասին գրել է հետեւյալը. «Հայերը երախտամոռ են, անազնիվ եւ անհուսալի՝ առանց բացառության» (տե՛ս La Piere, «The Armenian Colony», էջ 339): «Հայազգի վկան կասի ճշմարտությունը միայն այն դեպքում, եթե դա բխում է նրա շահերից, հակառակ դեպքում նա կստի զինվորականի պես» (տե՛ս La Piere, նույն տեղում, էջ 339): «Եթե դուք հայի հետ քաղաքավարի եք, ապա նա կոպիտ է ձեզ հետ: Իսկ եթե դուք կոպտում եք նրան, նա հարգում է ձեզ: Հայերից շատ քչերն են ժպտում - նրանք թթված դեմքի արտահայտություն ունեն, սակայն դա ոչ թե տխրության նշան է, այլ անբարյացակամության: Եթե նրանք Թուրքիայում իրենց դրսեւորեն այնպես, ինչպես դրսեւորում են այստեղ, ապա զարմանալի չի լինի, եթե թուրքերը ոչնչացնեն նրանց: Հայերից շատերը երազում են քշել թուրքերին այդ երկրից» (տե՛ս La Piere, նույն տեղում, էջ 341): «Ֆաուլերում, որը Ֆրեզնոյից ոչ հեռու գտնվող ագարակային համայնք է, հայերը միակ օտարերկրացիներն են: Նրանք կարծում են, թե իրենք նույնքան լավն են, որքան տեղաբնակները: Ես չգիտեմ, թե ինչու են նրանք վատը, բայց մենք մտածում ենք, որ նրանք վատն են» (տե՛ս La Piere, նույն տեղում, էջ 346): Ահա այսպիսի մռայլ երանգներով է Լյա Պիեռը ներկայացնում հայ ժողովրդին:

Ազգությամբ ամերիկացի մի ուսուցիչ եւս առանձնապես հիացած չէ հայերով: Նա ասում է հետեւյալը. «Հայ երեխաների վարքը դասարանում, դպրոցի տարածքում եւ հասարակական հավաքատեղիներում հաստատում են վերը ներկայացված գնահատականները: Հայ երեխաները աղմկոտ են, ագրեսիվ, կռվարար եւ շատ են աչքի զարնվում» (տե՛ս La Piere, նույն տեղում, էջ 343):

Հարկ է հավելել, որ ոչ բոլոր ֆրեզնոյաբնակներ են բացասաբար գնահատում հայերին: Կային նաեւ դրական գնահատականներ, ինչը միանգամայն բնական է, քանի որ մարդ արարածին հատուկ են սուբյեկտիվիզմը եւ կողմնակալությունը: Ուստի եւ ցանկացած ծայրահեղական գնահատականի, լինի դա բացասական թե դրական, պետք է վերապահումով մոտենալ: Ինչեւէ, վերն ասվածից չի կարելի եզրակացնել, թե հայ ազգին տրված բացասական բոլոր գնահատականները բացարձակ շինծու են եւ իրականության հետ որեւէ կապ չունեն: Այլ խնդիր է, որ դրանք կարող են չափազանցված լինել:

Թեեւ Լյա Պիեռը բացասաբար է ներկայացնում հայերին եւ խստորեն քննադատում է նրանց բնավորությունն ու վարքագիծը, սակայն նա փորձում է հասկանալ, թե ինչու են հայերն այնպիսին, ինչպիսին որ նրանք կան: Ֆրանսիացին իր հարցերի պատասխանը գտնում է հայոց պատմության մեջ: Նրա պնդմամբ՝ հայերի հոգեբանությունը փոփոխության էր ենթարկվել, քանի որ նրանք դարեր շարունակ ստիպված էին եղել պաշտպանել իրենց ընտանիքները թշնամական միջավայրում: Նրանք չէին կարող արագ փոխվել ամերիկյան հասարակության մեջ: Հայերի անցած պատմական ուղին նրանց դարձրել էր նվիրված իրենց ընտանիքներին: Նրանք խորամանկ են եւ ճարպիկ, քանի որ այդ հատկություններն անհրաժեշտ են իրենց ընտանիքները պաշտպանելու համար: Հայերը մշտապես կասկածամիտ են եւ չեն վստահում մարդկանց: ... Հայերը պատրաստ են դավաճանելու օտարներին՝ հանուն իրենց ընտանիքները փրկելու (տե՛ս La Piere, նույն տեղում, էջ 436): Այնուհետեւ Լյա Պիեռը շեշտում է, որ հայերն ավելի անազնիվ եւ ագրեսիվ չեն, քան ուրիշները, բայց նրանք խորամանկ են, անազնիվ ու ագրեսիվ՝ յուրօրինակ ձեւերով: Նրանք այդ ձեւերն իրենց հետ բերել էին Հայաստանից (տե՛ս La Piere, նույն տեղում, էջ 447):

Հայերից շատերը գիտեին, թե ինչպես են Ամերիկայի հնաբնակները գնահատում իրենց: Այդ մասին քաջատեղյակ էր նաեւ ինքը՝ Վիլյամ Սարոյանը: Ամերիկահայ գրողն ասում է հետեւյալը. «Ամերիկացիները հայերին ցածր կարգի են դասում: Նրանց անընդհատ խելք են սովորեցնում, նրանց ատում են, իսկ ես նույնպես հայ եմ: Ես չէի կարող մոռացության մատնել այս վերաբերմունքը: Ես այժմ էլ չեմ կարողանում մոռանալ այդ ամենը, բայց սրա պատճառն այն չէ, որ հայ լինելը առանձնահատուկ նշանակություն ուներ կամ ունի ինձ համար» (տե՛ս Here Comes, էջ 139): Ինչեւէ, «հայ լինելը» մնաց մի հարց, որը մշտապես գրողի ուշադրության կենտրոնում էր: Չնայած գրողի պնդմանը, ըստ որի՝ «հայ լինելը ոչ մի յուրահատուկ կարեւորություն չունի իր համար», նա հաճախ է նույնացնում ինքն իրեն արհամարված եւ չսիրված էթնիկ խմբի հետ:

Ինչպես ասել է Սարոյանի «Քոկյանքի ժամերը» պիեսի գլխավոր հերոս Ջոն. «Մարդ պետք շատ վարժվի, որպեսզի ինքն ինքը լինի» (տե՛ս W. Saroyan, The Time of Your Life (New York: Harcourt, Brace and Co., 1939), էջ 112): Բայց եթե մարդ հայտնվում է որեւէ հաստատությունում, լինի դա որբատուն թե քաղաքային դպրոց, ապա այդ դեպքում ինքնավարժանքները կարող են խոչընդոտվել կամ նույնիսկ արգելվել: Սարոյանի համար դպրոցը նման էր Օուքլենդի որբանոցին, որտեղ նա եւ իր քույրերն ու եղբայրները ապրել էին հինգ տարի շարունակ, մինչ իրենց մայրն աշխատում էր որպես աղախին: Նշված իրողությունը դարձավ ներածություն գրողի «փակուղային աշխարհի» համար:

Շարունակությունը՝ էջ 8

ՋԵՅՄՍ ՌԱՍՍԵԼԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԿԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 4

Օրինակ՝ հունական Արտեմիսը որսորդության աստվածուհի է, որի տոտեմն է եղջերուն, մինչդեռ հայ-իրանական Անահիտին ոչ մի առասպել չի վերագրում նման հատկանիշ: Զուր չէ, որ Իսիդոր Քարակացին Մեդիայում հիշատակում է Արտեմիսին եւ Անահիտին որպես առանձին աստվածուհիների՝ իրենց առանձին մեհյաններով *(Ռասսելը ճիշտ չի հասկացել Իսիդոր Քարակացու խոսքը, ուստի եւ գրում է.«Պարթեւների ժամանակաշրջանում Քուրդիստանի Կանգավարում կար մի մեծ եւ նախշազարդ տաճար՝ ենթադրաբար նվիրված Անահիտային: Իսիդոր Քարակացին այն նկարագրում է որպես Արտեմիսի տաճար» - «There was a great and ornate temple presumably to Anahita in the Parthian period at Kangavar in Kurdistan, described by Isidore of Charax as a temple of Artemis» (էջ 246)*: Ռասսելը թյուրիմացաբար նույնացրել է Կանգավարում (լատ. Konkobar) գտնվող Արտեմիսի տաճարը Մեդիայի մայրաքաղաք Էկբատանայում գտնվող Անահիտի տաճարի հետ. «Այստեղից Վերին Մեդիան է, 38 սքոյնոս [տարածությամբ] եւ սկսվում է Կոնկոբար քաղաքով. այնտեղ է գտնվում Արտեմիսի տաճարը, 3 սքոյնոս: Հետո Բազիգրաբան, որը մաքսատուն է, 3 սքոյնոս: Հետո դեպի [Էկ]բատանայում [գտնվող] Ադրապանա ապարանքը, որը Տիգրան Հայը կործանեց, 4 սքոյնոս: Հետո [Էկ]բատանա՝ Մեդիայի մայրաքաղաքը, ուր [գտնվում են] գանձարանը եւ տաճարը, որտեղ միշտ զոհ են մատուցում Անահիտ [աստվածուհուն], 12 սքոյնոս: Հետո երեք գյուղ, նրանցից յուրաքանչյուրում կայան» *(Իսիդոր Քարակացու Պարթեւական կայանները (VI - թարգմ. հունարենից՝ Էդվարդ Դանիելյանի (ՊԲՀ, 1971, համար 4, էջ 171-182): Իսիդորը հիշատակում է երեք տարբեր Արտեմիսի տաճար եւ մեկ Անահիտի տաճար: Պետք չէ անպայման պատմական աշխարհագրության մասնագետ լինել հասկանալու համար, որ չի կարելի տարբեր վայրերում գտնվող եւ այն էլ տարբեր անուններ ունեցող տաճարները նույնացնել իրար հետ, բացի այդ՝ Ռասսելը լուրջ անաքրոնիզմ է թույլ տալիս՝ «ժամանակակից Քուրդիստան» անունը գործածելով Իսիդոր Քարակացու Կանգավար տեղանվան հետ)*:

Միաժամանակ Խորենացու երկում առկա վերոհիշյալ հունական աստվածությունների անուններով ինձ համար բացահայտվում է մի այլ արժեքավոր իրողություն: Խորենացին «Հայոց Պատմության» Բ գրքի ԺԴ գլխում պատմում է, թե Հայոց թագավոր Արտաշեսը ճանապարհին վախճանվում է, իսկ որդի Տիգրանը նրա ուղարկած պղնձաձույլ արձաններով Հայաստանում մեհյաններ է հիմնում՝ «Առաջին գործ զմեհեանսն շինել կամեցաւ (Տիգրան): Իսկ քրմացն, որ եկեալ էին ի Յունաց, զմտաւ ածեալ, զի մի՛ ի խորագոյն Հայս վարիցին՝ պատճառեցան ըղձութիւնս, իբր թէ դիքն անդէն կամիցին զբնակիլն: Որում հաւանեալ Տիգրան, կանգնեաց զՈղիմպիական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, եւ զԱթենայն ի Թիլ, եւ զԱրտեմիդայ զմիւս պատկերն յԵրիզայ, եւ զԵփեստուն ի Բագայառինջ: Բայց զԱփրոդիտեայ զպատկերն, իբրեւ Հերակլեայ տարփաւորի, առ նորին պատկերին Հերակլեայ հրամայեաց կանգնել յաշտից տեղիսն»: Խալաթյանցի հիշատակած հունարեն աստվածությունները հուշում են, որ Խորենացին օգտվել է Ագաթանգեղոսի այն հունարեն բնագրից, որ գրվել է IV դարի սկզբին Հայոց Տրդատ թագավորի արքունիքում՝ Դավիթ Հռովմայեցու ձեռքով, եւ այս հունարեն անունները գրեթե նույնությամբ կրկնված են բելգիացի հայագետ Ժերար Գարիտտի 1946 թվին հրատարակած հունարեն Ագաթանգեղոսում *(Արտեմիս եւ Ապոլլոն (Անահիտ եւ Տիր՝ Արտաշատում), Հռեա՝ Թորդանում, Դիոս (Արամազդ՝ Անի ամրոցում), Մեծ Արտեմիս՝ Երեզ ավանում, Աթենա՝ Թիլ ավանում, Դիոնիսոս՝ Դերջան գավառում)*: Այստեղ է, որ մենք Թիլ ավանում հանդիպում ենք Աթենային, որի փոխարեն հայերեն Ագաթանգեղոսն ունի Նանե (պրգ. 786) *(Խորենացու ցուցակում բացակայում է Թորդանը, որտեղ հայերեն Ագաթանգեոսում եղած «Բարշամինի» դիմաց հունարեն Ագաթանգեղոսն ունի «Հռեա» կանացի անունը, որը բացարձակ սխալ է, քանի որ նույն դրվագը թարգմանելիս «Բարշամինը» պետք է ներկայացվեր համարժեք հունարեն աստվածությամբ: Ուստի ես կարծում եմ, որ «Հռեա» անունը գրչական սխալ է, եւ հունարեն բնագրում նախապես եղել է ռազմի «Արես» աստծո անունը՝ Արեա:*

Միշտ չէ, որ հայ թարգմանիչը հայերեն Ագաթանգեղոսում պահպանել է հին հունարեն Ագաթանգեղոսում եղած բագիններին ճշգրիտ համարժեքները: Այսպես, հունարեն Ագաթանգեղոսում առկա Դիոնիսոսի դիմաց (գինու եւ խրախճանքի աստված Բաքոսը) հայերենն ունի Միհր (Մրհական ձեւով), որը կրակի եւ արեւի աստվածն է: Ուստի Խորենացին ստիպված հունարեն Դիոնիսոսի փոխարեն դնում է «Հեփեստուն»՝ Հոմերոսից իրեն հայտնի կրակի եւ դարբնության աստված Հեփեստոսին՝ իբրեւ հայերեն Միհրի համարժեք:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ թիվ 14-17, 19-22

Չարմանք է հարուցում Չարենցի «Մի ծեր վանական» պայմանական վերնագրով պոեմը, որի բազմաթիվ եւ իրար հաջորդող սեւագրությունների միջից ուրվագծվում է հայոց բնաշխարհին հարազատ մի պատկեր: Աղոթքի ու հսկումի կանգնած ծեր վանականի կերպարը խորհրդանշում է Չարենցի անցումը Կոմիտասից դեպի նախակերպար: Պահպանված ձեւով պոեմը, դժբախտաբար, սեւագիր ու խճողված էջերի շարք է, բացառված չէ, որ Չարենցը ստեղծած լինի նաեւ պոեմի մաքրագիր տարբերակը, ինչն առկա ուրվագծերը կվերածի հստակ գծերի: «Անտիպ եւ չհավաքված երկեր»-ում տպագրվել է «Եվ բարձրանում էր նա վեր...» վերնագրով պոեմ՝ գրված 1937-ին, 482 տող ծավալով, որի «սկզբի 27 էջերը չեն հայտնաբերված» (էջ 358): Հրապարակողը ենթադրում է, որ «Չարենցի այս ստեղծագործությունը կոչված էր պատկերելու XIV դարի վերջին կեսին եւ XV դարի սկզբին ապրած հայ նշանավոր քերթող ու պատմագիր Գրիգոր Ծերենց Խլաթեցու կյանքի վերջին օրերն ու նահատակությունը» (Անտիպ եւ չհավաքված երկեր, էջ 660):

Այս ենթադրության համար հետազոտողը վկայակոչում է «թերթիկներից մեկի վրա բանաստեղծի ձեռքով գրված մի թվական՝ 1386...», ինչը զուգադիպում է Գրիգոր Ծերենց Խլաթեցու ապրած ժամանակաշրջանին (1350-1425): Սակայն 1386-ը այլ թվական չէ, քան 1937-ը: Ծերենցի «Հիշատակարան աղետից» գրքում պատկերվում են Լենկթեմուրի եւ այլոց ավերիչ արշավանքները 1386-1422 թթ.: 1386-ին նաեւ տեղի է ունեցել արեւի խավարում: Չարենցն ինքն է նկատել՝ «1937-1386=551, 1386+55=1937 թիվ»:

Արեւի խավարում՝ Լենկթեմուրի արշավանքի ժամանակ, ում ինքն անդրադարձել էր «Գովք խաղողի, գինու եւ գեղեցիկ դպրության» պոեմում («Թեյմուրլենկ չարաչք ու չարաժանտ»), եւ կյանքի խավարում՝ «Ժողովուրդների հայր ու արեւ» Ստալինի օրոք: Արդյոք ժամանակների զուգահե՞ռը (Լենկթեմուր-Ստալին, խավարում-խավարում) Չարենցին տարավ միջնադար, թե՞ միջնադարը վերադարձել էր, ինչի մասին ահազանգում էր Իսպանիային նվիրված բանաստեղծություններում (տե՛ս Անտիպ եւ չհավաքված երկեր, էջ 83-88): Ահա մեկ քառատող.

Արշավում է ե՛ւ քո, ե՛ւ
աշխարհի վրա
Վարձկան ոհմակների գլուխն
անցած՝
Հագած զարմանալի գրահ՝
Քո միջնադարյան անցյալը...

Միջնադարի վերադարձը Չարենցը բարձրաձայնում է նաեւ այլ առիթներով՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ աստուծո», «Միջնադարյան կացին»: Միջնադարն առկա է թե՛ 1935-1937 թթ. ստեղծագործության մեջ եւ թե՛ «Գիրք ճանապարհի»-ում: Չարենցը, մի կողմից, ժամանակների նմանություն էր տեսնում, մյուս կողմից՝ ելք որոնում իր ժամանակից: «Գովք...»-ում մեկ անգամ չէ, որ այսպիսի գնահատումներ է տալիս. «Օ՛, միջնադարյան մթին խուցեր», «Օ՛, միջնադարյան մռայլ արեւ՝ // Կախված կապարե երկնքից մութ...»: Իսկ Լենկթեմուրին հիշատակող հատվածն ունի այսպիսի ամբողջական տեսք.

Շահատակողներ
ժանտադաժան.-
Թեյմուրլենկ՝ չարաչք ու
չարաժանտ,
Չինգիզխան զարհուր եւ
զանազան,
Եվ ռուս արքաներ
արնաբաժան...

«Գիրք մնացորդաց»-ում շատ են սեւագիր գործերը: Սեւագրել է ու անմիջապես նույն էջի վրա մաքրագրել: Երբեմն ստեղծել է մի քանի սեւագրություն եւ մի քանի մաքրագրություն: Սեւագրությունների մեջ ուղղումներն ու ջնջումները երբեմն բազմահարկ են: Ձանացել ենք այդ ամենն արտացոլել բնագրային եւ բնագրային տարբերություններ բաժիններում:

Այս ձեռագրերի մեջ Չարենցի կյանքն է ու ժամանակը՝ անավարտ ու լարված: Ստեղծագործական հոգեբանության տեսակետից մի բարդ աշխարհ, որովհետեւ այս սեւագրություն-մաքրագրությունների մեջ Չարենցի զառանցանքների ու մղձավանջների սրտագիրն է ու մտագիրը: Թղթի փոքրիկ պատառիկներ՝ երբեմն գրված շատ խիտ, երկու երեսին, նույն թղթի վրա՝ երբեմն միանգամայն տարբեր գործեր, հղացումների հեղեղ, չամբողջացած տողեր, տներ, բանաստեղծություններ եւ պոեմներ...

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Պարարտ վանականը

Սկիզբը՝ թիվ 19

«Թո՛ղ անիծյալ լինի նա, ով Տիրոջ գործը ծուլությամբ կկատարի»

Երեմ. 48. 10

Հնում, եթե բարեպաշտ վանականներից մեկը վատնում էր ժամանակը՝ հոգ տանելով աշխարհի վիճակի մասին, ապա նրան փակում էին ամրոցում: Այսօր հակառակն է. բարեպաշտ վանականին փակում են ամրոցում, եթե նա չի հետաքրքրվում եւ չի ցավում այն իրավիճակի համար, որը տիրում է աշխարհում: Որովհետեւ նախկինում նրանք, ովքեր ղեկավարում էին, իրենց մեջ Աստծուն ունեին, իսկ հիմա ղեկավարողներից շատերը Աստծուն չեն հավատում: Այսօր շատ են այնպիսի մարդիկ, ովքեր ձգտում են մասնատել ամեն ինչ՝ ընտանիք, երիտասարդություն, Եկեղեցի: Մեր օրերում հետաքրքվել եւ անհանգստանալ այն իրավիճակի համար, որի մեջ գտնվում է մեր ժողովուրդը, դավանություն է, քանի որ պետությունը պատերազմում է աստվածային օրենքների դեմ: Օրենքները, որոնք նա է ընդունում, ուղղված են Աստծո օրենքների դեմ:

Կան նաեւ այնքան անտարբեր մարդիկ, որ նույնիսկ Եկեղեցին չեն ճանաչում որպես աստվածային կառույց եւ սեփական ժողովրդին վերաբերվում են հպարտությամբ եւ որպեսզի մատնեն իրենց պարապությանը, ասում են. «Պողոս առաքյալն ասում է, որ պետք չէ հետաքրքրվել աշխարհիկ գործերով» եւ շարունակում են մնալ անտարբեր: Բայց Պողոս առաքյալն ուրիշ բան նկատի ուներ: Այն ժամանակ իշխանությունը կռապաշտ ժողովուրդների ձեռքում էր: Ոմանք խզում էին կապն իշխանության հետ եւ հավատում էին Քրիստոսին: Ահա այդպիսի՛ մարդկանց է Պողոս առաքյալն ասում. «Մի՛ զբաղվեք աշխարհիկ գործերով», որպեսզի նրանք բաժանվեին աշխարհից, որովհետեւ ողջ աշխարհը կռապաշտ էր (Բ. Տիմ. 2. 4): Սակայն այն ժամանակից ի վեր, երբ իշխանության եկավ Կոնստանդին Մեծը, եւ հաղթեց քրիստոնեությունը, կամաց-կամաց ձեւավորվեց քրիստոնեական մեծ ավանդություն՝ կապված եկեղեցիների, վանքերի, արվեստի, աստվածապաշտության կանոնների հետ: Եվ ուրեմն, մենք ենք պատասխանատու այն բանի համար, որ պահպանենք այս ամենը եւ թույլ չտանք Եկեղեցու թշնամիներին մասնատել այն: Ինձ նույնիսկ հոգեւորականներ են պատահել, որոնք ասում էին. «Դուք դրանով մի զբաղվեք»: Եթե նրանք մեծ սրբություն ունենային եւ աղոթքի միջոցով հասած լինեին այդ վիճակին, երբ ոչինչ իրենց չէր հետաքրքրում, ապա ես նույնիսկ նրանց ոտքերը կհամբուրեի: Բայց հիմա նրանք անտարբեր են, որովհետեւ ուզում են բոլորի համար լավ լինել եւ անհոգ ապրել:

Անտարբերությունը թույլատրելի չէ նույնիսկ աշխարհիկ մարդկանց, ուստի որքան առավել է հոգեւոր մարդկանց պարագայում: Արդար եւ հոգեւոր մարդը չպետք է որեւէ բան անտարբերությամբ անի: «Թո՛ղ անիծյալ լինի նա, ով Տիրոջ գործը ծուլությամբ կկատարի» (Երեմ. 48. 10),- ասում է Երեմիա մարգարեն:

ՀՈԳԵՎՈՐ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ

ՕԳՆԵՆՔ ՄԱՐԴԿԱՆՑ ՀՈԳԵՎՈՐ ԱՌՈՒՄՈՎ

Հնում տասը մարդուց վեցն աստվածավախ էին, երկուսը՝ չափավոր, երկուսը՝ անտարբեր, բայց վերջիններս էլ իրենց մեջ հավատք ունեին: Այսօր այդպես չէ: Չգիտեմ, թե այս ամենն ուր կտանի: Ձանանք այսօր որքան հնարավոր է մարդկանց օգնել հոգեւոր առումով: Որպեսզի, ինչպես ջրհեղեղի ժամանակ Նոյան տապանում, այնպես էլ հիմա, փրկվեն մի քանիսը, հոգեպես չտանջվեն: Շատ մտածողություն եւ ուշադրություն է անհրաժեշտ. զննել տեղի ունեցող երեւույթները տարբեր կողմերից եւ օգնել մարդկանց: Ի՞նչ է, կարծում եք՝ ինձ հաճելի՞ է, որ մարդիկ են հավաքվում, կամ ես ուզո՞ւմ էի այսքան մարդ տեսնել: Ո՛չ, բայց այն իրավիճակում, որի մեջ մենք գտնվում ենք, դժբախտ մարդկանց անհրաժեշտ է մի քիչ օգնել: Ես հենց այն բանի համար չդարձա քահանա, որ ժողովրդի հետ շփում չունենամ, բայց ի վերջո ես ավելի շատ եմ զբաղվում նրանց հետ: Բայց Աստված գիտի իմ տրամադրվածությունը եւ տալիս է ինձ ավելի շատ, քան կտար, եթե ես անեի այն, ինչ ինձ է հաճելի: Քանի անգամ եմ խնդրել Աստվածամորը գտնել ինձ համար խաղաղ եւ մեկուսի վայր, որպեսզի ոչինչ չտեսնեի, չլսեի եւ աղոթեի աշխարհի համար, բայց Նա ինձ չի լսում. Իսկ մնացած իմ չնչին խնդրանքները լսում է: Արի ու տես, որ մարդկանց այցելությունից առաջ Աստված ինչ-որ հիվանդությամբ ինձ գամում է անկողնուն, որպեսզի ես հանգստանամ: Նա չի տալիս ինձ այն քաղցրությունը, որ ես առաջ էի զգում աղոթքի ժամանակ, որովհետեւ այն ժամանակ ես չէի կարողանում նրանից բաժանվել: Այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը խուց էր գալիս, ես ինձ ստիպում էի դուրս գալ այդ հոգեւոր վիճակից *(Ծերը վերապրած լարված հոգեւոր վիճակից հետո (նա զգում էր, թե ինչպես է հալչում ջերմության մեջ գտնվող մոմի նման՝ Աստծո եւ մարդկանց հանդեպ սիրուց) տեղեկություն ստացավ վերեւից այն մասին, որ նա չպետք է մարդկանց մերժի օգնության հարցում: Այդ ժամանակից ի վեր նա օրը տրամադրում էր իրեն այցելող մարդկանց, իսկ գիշերը աղոթում էր աշխարհի զանազան խնդիրների համար: Սակայն երբ ուխտավորների թիվը չափազանց շատացավ, Ծերը մտածում էր առանձնանալ անհայտ մի վայրում, որպեսզի իր ամբողջ ժամանակը տրամադրի աղոթքին: Այդ ժամանակ երկրորդ անգամ նա տեղեկություն ստացավ, որ պետք է մնա իր խցում եւ օգնի մարդկանց)*:

Շարունակությունը՝ էջ 8

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ ԵՎ ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. ՄԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սկիզբը՝ էջ 5

Այդ ամենով հանդերձ, լավ թե վատ, գնահատել ենք այդ հանճարին, բայց ցայսօր ինչպես հարկն է չենք գնահատել խնդրո առարկա «Հանգուցյալ Պարոնը կամ Պարոն Հանգուցյալը» արտասահմանյան պատմվածքը, ամբողջ խորությամբ չենք բացահայտել հայ ազատագրական շարժման, քաղաքական կուսակցությունների եւ մանավանդ հայ հեղափոխական դաշնակցության ու նրա գաղափարական առաջնորդների ու ազգանվեր գործիչների հանդեպ բանաստեղծի վերաբերմունքը: Սակավ բացառություններ են բանաստեղծի ողջության օրոք Հ. Սուրխաթյանի բնութագրական հոդվածները, 1962 թ. Հր. Թամրազյանի գրած «Խմբապետ Շավարշը» պատմական դարաշրջանի լույսի տակ» խիզախ ուսումնասիրությունը եւ էլի մի քանի կարեւոր նվաճումներ: Մինչդեռ հիշյալ խնդիրներն առկա են Չարենցի ստեղծագործության բոլոր շրջափուլերում ու բոլոր նշանակալից ստեղծագործություններում, եւ դրանց անկողմնակալ պարզաբանումն առաջնահերթ անհրաժեշտություն է՝ ուսանելի՝ այսօրվա ու վաղվա քաղաքացու, բոլոր հայ սերունդների համար:

Խորհրդային ժամանակներում հասկանալի է, բայց եւ հետխորհրդային ժամանակներում «Հանգուցյալ Պարոնը կամ Պարոն Հանգուցյալը» պատմվածքին առանձնապես կարեւորություն չի տրվել, եթե չասենք՝ նրբորեն շրջանցել են այն, եւ միակ բացառությունն այս իմաստով Վ. Նավասարդյանի գիրքն է, որի էջերում Չարենցին արտասահմանում անձամբ հանդիպած հեղինակը բացարձակ անկեղծությամբ տալիս է միանգամայն հավաստի տեղեկություններ ու կարեւոր բացատրություններ: Նախապաշարումներից ու գաղափարական պարտադրանքներից ազատ Վ. Նավասարդյանը չի շրջանցել նույնիսկ իր համար աննպաստ չարենցյան արտահայտությունները: Նույնիսկ ընդգծել է, թե իր գրավոր խոսքում Չարենցը բացարձակապես անկեղծ է ու արդարամիտ, եւ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. փետրվարի 16-ի համարում տպագրված պատմվածքում ներկայացված իրենց զրույցը ճշգրտորեն համապատասխանում է իրականությանը:

Հանդիպումը՝ հանդիպում, սակայն նրա չարենցյան նկարագրությունը չոր ու ցամաք քաղաքական հոդված չէ, այլ նախ եւ առաջ՝ իրական հիմքի վրա ստեղծված գեղարվեստական պատկեր՝ հյուսված կենդանի եւ աշխույժ լեզվով, տարբեր բանադարձումներով ու ոճական միջոցներով: Հենց լեզվական այդ ճկունությունն է հնարավորություն տվել Չարենցին՝ երբե՛մն բացահայտ, երբե՛մն ոչ բացահայտ կամ շղարշված արտահայտելու իր համակրանքը Վ. Նավասարդյանի եւ նրա քաղաքական կուսակցության նկատմամբ, եւ որ դարձյալ կարեւոր է՝ այն տպագրել բոլշեւիկյան կուսակցության օրգան «Խորհրդային Հայաստան» օրաթերթում: Ասում ենք՝ **շղարշված**, **ոչ բացահայտ**, որովհետեւ ինքը ե՛ւ հայ էր, ե՛ւ կոմունիստ եւ վերադարձին հաշվետու պիտի լիներ խորհրդային իշխանությունների առջեւ:

Բնական է, որ ազատ մտածողության տեր Վ. Նավասարդյանն ավելի նպաստավոր վիճակում էր Չարենցի ու համայնավարների նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտելիս, որովհետեւ բոլշեւիկյան իշխանությունների առջեւ հաշվետու չէր:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀԵՐԸ

Սկիզբը՝ էջ 6

Սարոյանն իր «Մարդկային կատակերգությունը» վիպակում գրում է Էմերսոնի անվան դպրոցի որոշ ուսուցիչների մասին, ովքեր իր համար խոչընդոտներ էին ստեղծում: Այդ մարդիկ զուրկ էին հումորից եւ գոռոզ բնավորություն ունեին: Նրանք հակառակվում էին իրենց աշակերտների ազատությանը, անկաշկանդությանը եւ չարաճճիությանը, ինչպես նաեւ նրանց պարզամտությանն ու անմեղությանը: Սարոյանը ներկայացնում է, թե ինչպես է գաղթականի երեխան հակառակվում իր անգլոսաքսոնացի բողոքական ուսուցչին: Սա դասական ամերիկյան տեսարան է: Վերջինս սկսվում է միջնակարգ դպրոցի ուսուցչի անվերջանալի պարզաբանումով: Նա բողոքում է իր թխաաչք աշակերտներից՝ նրանց եւ իր մշակութային տարաձայնությունների պատճառով: Ուսուցիչը երազում է այն ժամանակի մասին, երբ իր աշակերտները կդադարեն երազել Հայաստանի, Սիրիայի եւ Ասորստանի մասին: Նա նաեւ ուզում է, որ երեխաները դադարեն բամբասել եւ ծաղրել իրեն՝ իրենց օտար լեզուներով: Մի՞թե նրանք իսկապես ծաղրում են ուսուցչին նրա թիկունքում: Փոքրիկ Սարոյանն այս կերպ է պատասխանում ուսուցչին.

-Ո՛չ, պարզապես մենք երբեմն հայերեն ենք խոսում:

-Բայց ինչո՞ւ: Չէ՞ որ այժմ դուք Ամերիկայում եք:

-Ամերիկացիները չեն սիրում մեզ, ուստի եւ մենք չենք սիրում նրանց:

-Ահա՛ թե ինչ: Իսկ ո՞ր ամերիկացիները չեն սիրում ձեզ:

-Բոլորը:

Ես նույնպե՞ս:

-Դուք նույնպես:

-Ի՞նչ գիտեք: Ես սիրում եմ կամ չեմ սիրում մարդկանց՝ նրանց արժանիքների ու թերությունների պատճառով:

-Ուրեմն դուք մտածում եք, թե հայերը ոչ մի արժանիք չունեն:

-Ոմանք ունեն, իսկ ոմանք՝ ո՛չ:

-Դե իհարկե, իսկ բոլոր ամերիկացիները հարյուր տոկոսով կատարյալ են, այդպես չէ՞:

-Դուք համախմբված եք, այդպես չէ՞:

-Դուք բոլորդ վախենում եք մեզնից, մեր բարձր ձայներից, մեր ճարպկությունից: Մի՞թե դուք նույնպես համախմբված չեք:

-Գուցեւ այո՛, բայց ի վերջո սա Ամերիկան է:

- Բայց հիմա մենք նույնպես այստեղի քաղաքացիներն ենք, եւ եթե դուք չեք կարողանում համակերպվել մեզ հետ, ապա մենք կկառչենք մեր արմատներին (տե՛ս Here Comes, էջ 68-69):

Վերը ներկայացված դրվագը վկայում է տարբեր մշակույթների անհամատեղելիության մասին: Պարզվում է, որ հնաբնակ ամերիկացիները չեն ընդունում եկվորներին, քանի որ նրանց վարքագիծն ու շարժուձեւը չեն համապատասխանում ամերիկյան հասարակության նորմերին: Ինքնըստինքյան պարզ է, որ սա կարող է հանգեցնել միջմշակութային կոնֆլիկտների: Միջմշակութային կոնֆլիկտների խնդիրն առկա է եղել մարդկության պատմության բոլոր ժամանակաշրջաններում: Այն մինչեւ օրս էլ լրջագույն խնդիր է աշխարհի այն երկրներում, որոնց բնակչությունը պոլիէթնիկ է: Իսկ ո՞րն է միջմշակութային հակադրության հանգուցալուծումը: Գոյություն ունի երկու ճանապահ. կա՛մ որեւէ երկիր գաղթածները պետք է ադապտացվեն տեղի պայմաններին, այսինքն՝ ընդօրինակեն տեղաբնակների բարքերը, սովորույթները, սոցիալական վարքագիծը, իսկ ավելի մեծ հեռանկարում որդեգրեն նրանց արժեհամակարգն ու հոգեկերտվածքը, կա՛մ էլ տվյալ երկրի հնաբնակները պետք է ձեւավորեն հանդուրժողական վերաբերմունք եկվորների հանդեպ, այսինքն՝ նորեկներին ընդունեն այնպիսին, ինչպիսին նրանք կան: Համաձայնենք, որ մշակութային հակազդեցության հաղթահարման նշված երկու եղանակներն էլ դժվարիրագործելի են առնվազն փոքր ժամանակաընթացքում: Կա եւս մեկ ելք ներկայացված իրավիճակից. խոսքն ազգային փակ համայնքների ստեղծման մասին է, ինչը, անշուշտ, հնարավորություն է ստեղծում ազգամիջյան շփումները հասցնելու նվազագույնի, բայց մեծ հաշվով սա չի կարող խնդրի վերջնական լուծում հանդիսանալ: Թերեւս սխալված չենք լինի, եթե ասենք, որ միայն ժամանակը կարող է հարթել առկա հակասությունները: Որպես օրինակ՝ հիշենք Եվրոպայի պատմությունը: Ինչպես հայտնի է, հանդուրժողականության գաղափարն այս աշխարհամասում մեկ օրում չէ, որ ձեւավորվել է: Սա բավականին դանդաղ գործընթաց է, որը կարող է մինչեւ անգամ դարեր տեւել: Իսկ մինչ այդ ազգամիջյան թյուրըմբռնումներն ու անհամաձայնությունները գրեթե անխուսափելի են: Վիլյամ Սարոյանը, լինելով փայլուն տաղանդի տեր մարդ, հրաշալի կերպով ներկայացրել է վերը նշված խնդիրները:

Շարունակելի

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՊԱՐՈՆ ՍԱԹՈՍՊՅԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԱՐԹՆՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 7

Խցում ես ապրում եմ ուրիշների ծրագրով: Ներսում սաղմոսներ էի կարդում, դրսում՝ թխթխկացնում էին. «Սպասեք մի տասնհինգ րոպե,- ներսից ձայն եմ տալիս», իսկ նրանք բղավում են. «Հե՛յ, հա՛յր, վերջացրու աղոթքդ, Աստված չի նեղանա»: Պա՞րզ է, մինչեւ ուր են հասնում: Եվ ոչինչ, եթե աղոթքից կտրվեի մի փոքր ժամանակ, բայց բավական է դուրս գայի, եւ վերջ: Ինչ հասցրեցի մինչեւ այդ պահը, դա էլ հասցրեցի: Առավոտյան ժամը վեց անց կես կամ յոթին, որպեսզի հանգիստ լինեմ, ես պետք է նաեւ երեկոյան աղոթքն ավարտեմ: «Առավոտ լուսո, փառքդ սուրբ»: Երբ դուք ավարտում եք առավոտյան աղոթքը, ես համրիչով ավարտում եմ արդեն երեկոյանը:

Լավ է, եթե առավոտյան հասցնեմ նշխար ուտել, հետո անգամ թեյ չեմ խմում, դիակի նման ընկնում եմ: Պատահել է, որ ե՛ւ Զատիկին, ե՛ւ Ավագ շաբաթին պահք եմ պահել: Ուզես թե չուզես, պետք է կարողանաս: Մի անգամ, չգիտեմ, թե ինչը խանգարեց ժողովրդի գալուն, հնարավոր է՝ փոթորիկ կար ծովում, եւ նավը չեկավ, եւ խուց ոչ ոք չեկավ: Ա՜խ, ես այնպիսի սինայական օր ապրեցի, ինչպես այն ժամանակ սուրբ Էպիստիմիի քարանձավում *(1962-64 թթ. Պահիհոսը ճգնել է Սինայում՝ Սուրբ Էպիստիմիի ճգնարանում)*: Երբ ծովում փոթրիկ է, ինձ մոտ խաղաղություն է, երբ ծովում է խաղաղություն, ինձ մոտ փոթորիկ է:

Իհարկե, ես ունեմ հնարավորություն առանձնանալու ինչ-որ տեղ՝ լռության համար: Գիտե՞ք՝ որքան մարդ է ինձ առաջարկել ճանապարհածախսը հոգալ, որպեսզի ես մեկնեմ Կալիֆոռնիա կամ Կանադա: «Արի մեզ մոտ,- ասում են, մեզ մոտ ճգնարան կա»: Եթե ես հայտնվեմ անծանոթ վայրում, կզգամ ինձ ինչպես դրախտում: Ոչ ոք ինձ չի ճանաչի, կլինեն սեփական օրակարգը եւ վանական կյանքը, ինչպես որ ես եմ ուզում: Բայց արի ու տես, որ զորացրումը լինում է միայն պատերազմից հետո: Իսկ հիմա պատերազմ է՝ հոգեւոր պատերազմ: Ես պետք է լինեմ առաջնագծում: Այնքան մարքսիստներ, մասոններ, սատանիստներ եւ նմանատիպ այլ բաներ կան: Որքան դիվահարներ, անարխիստներ եւ մոլորվածներ են գալիս, որ ես օրհնեմ նրանց մոլորությունը: Իսկ քանիսին են ուղարկում ինձ մոտ՝ չստիպելով նրանց խորհել. ոմանք այն բանի համար, որ նրանցից ազատվեն, մյուսները՝ որ իրենք անձամբ օձին չհանեն բնից: Եթե միայն իմանայիք՝ ինչպես են ինձ ճնշում եւ քանի կողմից: Մարդկային ցավից դառնացել է բերանս: Բայց ներքուստ մխիթարություն եմ զգում: Եթե հեռանամ, կկարծեմ, որ հեռանում եմ առաջնագծից, նահանջում եմ: Դա կհամարեմ դավաճանություն: Դա ես այդպես եմ հասկանում: Մի՞թե դա եմ ցանկացել, երբ սկսել եմ ճգնել կամ գուցե ես ցանկացել եմ օգնել վանքերին: Ես մի տեղ էի գնում, բայց հայտնվեցի մեկ այլ տեղում եւ ինչպե՜ս եմ ես հիմա պայքարում: Եվ չի էլ լսվում, որ (այն ամենի մասին, ինչ տեղի է ունենում շրջապատում) մեկ ուրիշն էլ խոսի դրա մասին: Եկեղեցին կործանո՞ւմ են: «Ոչինչ»,- կասի որեւէ մեկը: Իսկ ինքն ընկերություն կանի ե՛ւ մեկի, ե՛ւ մյուսի հետ, միայն թե իրեն հարմար լինի: Իսկ ի՞նչ հարմարություն: Նրան ի վերջո սատանան «կհարմարեցնի»: Չէ՞ որ դա արժանապատիվ չէ: Եթե ես ցանկանայի անել այն, ինչ ինձ հաճույք է պատճառում, գիտե՞ք՝ որքան հեշտ կլիներ դա: Սակայն նպատակն այն չէ, որ անեմ այն, ինչ ինձ է հարմար, այլ այն է, որն օգնում է ուրիշին: Եթե ես մտածեի այն բանի մասին, թե ինչպես ինքս հարմար տեղ գտնեմ, ապա շատ տեղեր կան, որ կհարմարվեի: Բայց նրա համար, որպեսզի անցնես Աստծո խորհրդարանը, պետք է դառնալ Աստծո «պատգամավոր» եւ ոչ թե ինքդ քեզ համար տաք տեղեր կազմակերպող:

Ռուսերենից թարգմանությունը՝
Արմինե ՏԵՐՏԵՐՅԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 18.12.2017 թ..

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ